

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1)

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն:

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2011 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը 14.00 Պտղունքի գյուղապետարանի շենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի գյուղապետարան կամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ-ի և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցե Աբովյան 71/:

Հեռախոս 0-237-2-07-70, 2-76-49

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ Պտղունքի գյուղապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2011 թվականի սեպտեմբերի 28-ը: